Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

9 (648)
24.03.2022
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամեն ինչ վերադառնում է ի շրջանս յուր: Անշուշտ, կարելի էր հայտնի այս ասույթը նաև հարցականով հնչեցնել, սակայն դրանով մեր մտահոգությունների բնույթը չի փոխվի: Իսկ մտահոգությունները մոտավորապես նույնն են, որպիսին կային… երեսուն տարի առաջ: Տարածքների օկուպացիա, ահաբեկչություններ սահմանամերձ գյուղերի բնակիչների նկատմամբ, գազի պարբերաբար անջատում… Թվարկածներին նոր վայրագություններ անպայման կավելանան, որովհետև թուրքը նորից մեր կողքին է, և նույնիսկ առանց հեռադիտակի կարելի է տեսնել նրա բաց ժանիքները:

Երեք տասնամյակ առաջ այսպիսի իրավիճակը մեզ պարտադրեց հակազդման: Ստիպված եղանք գազանին հալածել մինչև իր որջը, որը քաղաքագիտական բառապաշարում կոչվում էր «անվտանգության գոտի»: Հիմա իրերի դրությունը քիչ-ինչ այլ է. եռակողմ ընդունված պայմանավորվածության պատանդ ենք, թեպետ կողմերից մեկը՝ Ադրբեջանը, թքած ունի բոլոր պայմանավորվածությունների վրա: Գազանը կրկին իր տարերքի մեջ է, որովհետև վանդակից բաց են թողել ու անտարբեր են նրա «չարաճճիությունների» վրա: Մինչև ե՞րբ:

Այս հարցը հնչում է ամենուր՝ փողոցում, հիմնարկներում, տանը: Հարցը հրատապ է իր ցավոտ շեշտվածությամբ: Այո, մենք դիմացկուն ենք, հոգով արի ենք, հանդուրժող ենք, ստանձնած պարտավորությունների հանդեպ ասպետական ենք, բայց, ախր, նաև պոռթկալ գիտենք: Իսկ մեր պոռթկալը տարածաշրջանային ցունամի է, որն այս պահին թերևս ոչ մեկը չէր ուզենա:

Տարիներ առաջ՝ հեռավոր 1986-ին Շուշիում խորհրդային քարոզչամեքենան կազմակերպել էր ինտերնացիոնալ ուղղվածության հերթական միջոցառումը՝ «Գրականությունների բարեկամությունը ժողովուրդների բարեկամությունն է» խորագրով: Հավաքվել էին գրողներ Ադրբեջանից, Վրաստանից, Հայաստանից, Մոլդովայից: Ազերի մի բանաստեղծ, որ հայտնի էր իր ազգայնական հայացքներով, բանաստեղծություն կարդաց մոտավորապես այսպիսի բովանդակությամբ՝ մի վախեցեք, եթե ձեզ թուրք են ասում, Բաբեկի սուրն է ձեր ձեռքին՝ գյավուրի գլխին պահած:

Նրա ցինիկությանն ի պատասխան արցախցի բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանը կարդաց իր հանրահայտ «Ղարաբաղցին»: Մատը թափ տալով վերջինիս վրա՝ Բեգլարյանը ցասումով գոչեց. «Իսկ թե նրան դառնացրիր, Խալիլ մուալլիմ, ամպի նման գլխիդ կորոտա շանթ ու կրակ ղարաբաղցին»:

Այս հիշեցումը բնավ էլ «որոտալու» կոչ չէ, մենք ուղղակի պարտավոր ենք սթափ նայել իրադարձությունների ընթացքին ու համարժեք հետևություններ անել: Նաև արցախցուն վայել արժանապատվությամբ հաղթահարել հերթական փորձությունները:

Իսկ բնությունն իր օրենքներն ունի, հատկապես, երբ երկինքը պատվում է մութ ամպերով:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Եղիշե ՉԱՐԵՆՑ-125

«ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՎԵՊԻ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՆՔԸ. ԱՆՅՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ



Գործ՝ Մ. Սարյանի

... Սկսենք բերդից:

*Քաղաքի արեւմտյան ծայրում, վերը, ժայռակուռ, դեղին բլուրի վրա- խիստ, խոժոռ, որպես արեւելյան քարե մի բռնակալ -բազմել է **Բերդը**: Ժայռե իր գահի, աթոռի վրայից նայում է քաղաքին: Քարե մի վիթխարի արկղ լինի կարծես՝ ծանր՝ ընկել է վերից ու կախված մնացել է բլուրի վրա, նստել է՝ ծանր ու հաստատ: -Ընկել է նախ մի հսկայական քարե արկղ կարծես -եւ հետո, մեկը մյուսի հետեւից տեղացել են վար ուրիշ մեծ ու փոքր, ծանր ու թեթեւ, զանազանաձեւ սնդուկներ՝ մեկը մեկի վրա, կողք կողքի. հրաշք է, չես հասկանում, զարմանում ես միայն: Ասում են, որ այդ բերդը շինելիս նահրցի վարպետները ձվի սպիտակուց են գործածել շաղախի փոխարեն - ահա, թե ինչու է այդ բերդը անխորտակելի: Անառիկ է այդ բերդը -ամենքը այդ գիտեն,- **եւ դավաճանությունն է, նենգ, ստոր, նահրյան դավաճանությունն է այդ բերդը հանձնել եկվոր սրիկաներին:** Հիմարները միայն կարող են չզարմանալ այդ բերդի վրա -եւ այդպիսի հիմարներից է, թող թույլ տրվի ասեմ, պ. Մարուքեն: Եվ թող ասի խնդրեմ պ. Դրաստամատյանը, այդ մեծամիտ «եվրոպացին». ինչո՞վ, ինչո՞վ պիտի պաշտպանվեր հնամյա այդ քաղաքը առաջին իսկ թշնամուց, եթե բերդը չլիներ: Այնտեղից, այո - բերդի անխորտակելի պատերի վրայից պիտի ռումբեր տեղան, եթե պատերազմ լինի: Այնտեղից - բերդի ժայռակերտ պատնեշների վրայից իջնի պիտի մի օր, որպես երկաթե մի բռունցք, պիրկ, անպարտ կորովը նահրյան ցեղի: - Որպես երկաթե մի բռունցք - իջնի պիտի մի օր թշնամու գլխին: - Ահա՛ թե ինչ է այդ բերդը - իհարկե, հասկացողի համար: Եվ ահա՛ թե ինչու - վարը, քաղաքում հանգիստ են տները՝ նիրհել են անհոգ ու անտարբեր: Իսկ խանութների առաջ նստել է նահրցի խանութպանը եւ ծույլ, անփույթ հորանջելով սպասում է գնորդի: Եվ ի՜նչ նշանակություն ունի այն հիմար, միանգամայն պատահական եւ ժամանակավոր հանգամանքը, որ հիմա, 1913 թվին, բերդի ամենաբարձր աշտարակի վրա ծածանվում է ո՛չ նահրյան, արծվազարդ մի դրոշ: Բերդը շինել են նահրցիները, բայց, դժբախտաբար, այդ նույն բերդն է հիմա եկվոր սրիկաներին - պաշտպանում թե մեզնից, բերդի եւ քաղաքի իսկական տերերից - եւ թե ամեն մի թշնամուց: Օրը կգա - եւ նրանք կգնան: Եվ նորից, բերդի անառիկ ամրություններից, որպես երկաթյա ահեղ մի սպառնալիք - կելնե, կհառնե ահասաստ, նահրյան ոգին. կորովը, ուժը հազարամյա - նահրյան աշխարհի... Ու կվառվի նորից անմար խնդությամբ, կժպտա խնդագին երկիրը հազարամյա - երկիրը Նաիրի... Այսպես էին մտածում այդ բերդի մասին նահրյան այդ քաղաքում ապրող իսկական նահրցիները...*

(Հատված «Երկիր Նաիրի» վեպից)

Տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները մեզ հիշեցնում են Չարենցի «Երկիր Նաիրի»-ի միջավայրն ու ժամանակները: Ուղերձները, որոնք շուրջ մեկ դար առաջ մեզ է հղել մեծ բանաստեղծը, բնավ ժամանակավրեպ չեն, ավելին՝ նորօրյա մտահոգությունների համակցությամբ դրանք խիստ արդիական են ընկալվում:

Սովորաբար նոր քաղաքական դարաշրջանը իր բնական արտացոլումն է գտնում գրականության մեջ իր իսկ ժամանակակցի միջոցով: Այսպես, պետականությունը կորցրած Հայաստանի ապագայի տագնապոտ հարցականները օրինաչափորեն իրենց արտացոլումը գտան Խորենացու «Հայոց պատմություն»-ում: Պարսկական լծից ձերբազատվող ռուսահպատակության նոր դարաշրջանն արժևորվեց «Վերք Հայաստանի»-ով: Սոցիալիստական հեղացնցումների դարաշրջանն էլ պիտի իր գեղարվեստական արտացոլումը գտներ, մասնավորապես, Չարենցի գրչով:

Յուրաքանչյուր փուլ, որպես առաջընթացի քայլ, դրսևորվում էր տվյալ ժամանակաշրջանին բնորոշ ժանրով. 5-րդ դարում իշխողը պատմավավերագրությունն էր, 19-րդ դարում պատմագրությունը գեղարվեստական վիպասանության անհրաժեշտություն ծնեց՝ հանձինս Աբովյանի: Չարենցի ժամանակ համեմատաբար ուրիշ էր. խորհրդահայ արձակը ժամանակի պահանջով պետք է նոր դպրոց ստեղծեր: Չարենցը դրեց այդ դպրոցի հիմնաքարը: Եվ ինչքան էլ իրարամերժ են «Երկիր Նաիրի»-ի ժանրի մասին կարծիքները՝ պատմավեպ, էպոս, երգիծավեպ, այդուհանդերձ, այն պատմավիպասանություն է՝ իր ոճական առանձնահատկություններով: Բանաստեղծի հակիրճ զսպվածությամբ, բառարժեքի ցցուն ընդգծվածությամբ, նույնիսկ երկրորդականը ավելորդ չտեսնելու մանրախնդրությամբ գրված վեպը նոր ժամանակի վավերագրումն էր:

Իսկ ժամանակն, իրոք, ճակատագրական վերափոխումների մեծ պարունակ ուներ Հայաստանի համար: Կարսը, Չարենցի հայեցակետով, երկրի առանցքն էր, որի կորսվելը Երկիր Նաիրին հանեց բնականոն ուղեծրից:

Ընդհանրապես, Չարենցը, իր վեպում հեռու մնալով վեպին բնորոշ դասական ատրիբուտներից, անկարևոր էր համարում նաև աշխարհագրական կոնկրետությունները (զորօրինակ՝ «առաջխաղացում սկսեն և քշեն մինչև Հայտնի քաղաքը»): Նաև ժլատ էր մնում կոնկրետ ժամանակի ընդգծումից: Հայտնի է, որ վայրը ռուսական (նահրախոս) գավառն է, ժամանակը՝ Առաջին աշխարհամարտը, որի արդյունքում կորսվեց Արևմտյան Հայաստանը: Ներհակություններով առանձնացող Չարենցը, իհարկե, կարող էր իր վեպում մանրամասնել իրադարձությունների տարեթիվն ու ամսաթիվը, նույնիսկ ժամը, բայց դա անում է խիստ անհրաժեշտաբար: Բնորոշ է, երբ Մազութի Համոն կանչվում է գավառապետի բնակարանը, հեղինակը չի զլանում մանրամասնորեն նշել կոնկրետ ժամանակը, քանի որ այդ օրերից հետո «դեպի քաղաք շարժվել սկսեցին զորքեր, զորքեր, զորքեր…»: Սկսվում է Նաիրի երկրի վերջնական աղետի սկիզբը: Ռուսաստանում ամբողջ հասակով հառնել էր Կոմունիզմի ուրվականը: Արևմտյան Հայաստանը կոխկրտվում էր Թուրքիայի արյունոտ կրնկի տակ. ի՞նչ էր սպասվում Նաիրիին:

Հեղաշրջման պատրաստվող Ռուսաստանը պետք է հստակեցներ հայերի դիրքորոշումը: Հայ բոլշևիկները հակված էին դեպի Ռուսաստանը, դաշնակցությունն անկախության էր ձգտում: Այդ հեղհեղուկ ժամանակաշրջանում Կարսի պետական այրերը՝ Տեղական կոմիտեի անդամները (Մազութի Համո, ընկեր Վառոդյան, Սերգեյ Կասպարիչ), դառնում են ժողովրդի ճակատագիրը վճռողներ: Եվ հրապարակ է դուրս գալիս «նահրադավությունը»:

Ակամայից նահրյան իշխանավոր դարձածները «բոժե ցարյա» երգողներն են և հստակ ունեն իրենց ռուսասիրությունը, բայց խնդիրն այլ ընտրության մեջ է՝ նո՞ր Ռուսաստան, թե՞ հին:

1917-ի աշուն: Ռուսական հեղափոխություն: Հայ բոլշևիկների ջանքերի շնորհիվ Ռուսաստանի տաք ձեռքը դեռևս առկա էր, թեև Կարսում «հրովարտակ դրոշը» ՀՅԴ-ն էր: Կովկասում ազգային հարցի լուծման ծրագիրը, որը հեղինակել էր Ստեփան Շահումյանը, անհիրագործելի էր, մանավանդ, երբ խոսքը վերաբերում էր Անդրկովկասը երեք մարզերի բաժանելուն: Թուրքահայաստանին ինքնորոշման իրավունք վերապահելն էլ պատրանք էր, քանի որ հաշտության հարցում թելադրողը ուժեղ կողմն էր, տվյալ դեպքում՝ Քառյակ միությունը, որի մի անդամն էր Թուրքիան:

Հենվենք պատմական փաստին. 1917թ. դեկտեմբերի 29-ի՝ «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որով ընդունվեց Թուրքահայաստանի անկախության իրավունքի մասին հռչակագիրը, պարզապես Հայկական հարցը դիվանագիտորեն շրջանցելու մարտավարական քայլ էր Լենինի ու Ստալինի կողմից: Ասպարեզում մերկ փաստն էր. ռուսական զորքերը այդ տարածքից դուրս հանելը ոչ թե ինքնորոշման իրավունք էր տալիս թուրքահայերին, այլ արձակում էր Թուրքիայի ձեռքերը, որին անկարող էր դիմագրավել պատերազմից հյուծված բոլշևիկյան Ռուսաստանը:

Եվ թերևս նույն այս հռչակագրի դրույթները դարձան Բրեստ-Լիտովսկի պայմանագրի խայտառակ կետերի հենքը: Պայմանագրում, որը ստորագրվեց 1918թ. մարտի 3-ին, և Լենինը բնութագրեց որպես «խայտառակ հաշտություն», նշվում էր, որ Արևմտյան Հայաստանի և Արդահանի, Կարսի ու Բաթումի օկրուգներից ռուսական զորքը մաքրվում է, և այնուհետև Թուրքիայի օգնությամբ նոր հասարակական կարգ է հաստատվում:

☞ 2

ՏԵՍԱԿԵՏ

Ո՞ՐՆ Է ՃԻՇՏ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Վերջին ժամանակներս մի հարց խուժել է իմ մտահոգությունների դաշտ և անընդհատ խորհելու, եզրահանգումներ, դատողություններ անելու առիթ է տալիս: Հարցը կապված է Արցախյան 30-ամյա պատերազմը մասնատելու, հատվածների բաժանելու հետ. առաջին պատերազմ, երկրորդ պատերազմ, քառօրյա պատերազմ, 2014 և 2015 թվականների օգոստոսյան ընդհարումներ, քառասունչորսօրյա պատերազմ, վերջին պատերազմ և այլ բնորոշումներ: Նման շեշտադրությամբ հանդես են գալիս ինչպես ժողովրդական լայն զանգվածներն իրենց ամենօրյա խոսակցական լեզվում, իշխանության մարդիկ պաշտոնական գրությունների, հանդիպումների, հայտարարությունների ժամանակ, անգամ այլ երկրների լրագրողներ, պաշտոնյաներ:

Ես այն կարծիքին եմ, որ Արցախյան ազատագրական պայքարը միջազգային հարթակներում ճիշտ ու շահեկան կլինի ներկայացնել «Արցախյան 30-ամյա պատերազմ» հասկացությամբ: Քանի դեռ մտորում էի ասածս հիմնավորելու շուրջ, հիշեցի դպրոցական տարիներից Հռոմեական կայսրության պայքարը Կարթագենի դեմ, որ պատմության մեջ հայտնի է Պունիկյան առաջին, երկրորդ և երրորդ պատերազմներ անվամբ:

Կարթագենը պետություն էր Աֆրիկայի հյուսիսում, այժմյան Թունիս քաղաքի մերձակայքում: Այն հիմնադրվել էր Ք.ա. 9-րդ դարում, համարյա նույն ժամանակաշրջանում, ինչ որ հայկական Ուրարտուն կամ Վանի Արարատյան թագավորությունը: Քանի որ խոսք գնաց հին հայկական այս պետության մասին, հարկ եմ համարում կարծիք հայտնել՝ կապված նրա անվան հետ: Պատմությանը հայտնի են պետության ինչպես Ուրարտու, այնպես էլ Վանի Արարատյան թագավորություն անվանումները: Կարո՞ղ է, արդյոք, Ուրարտուն հնչեղ արտահայտվի, քան Վանի Արարատյան թագավորություն անվանումը: Ոչ մի դեպքում: Ուրարտուն շատ ավելի նեղ (միայն գիտնականների, հետաքրքրվողների) շրջանակներին կարող է ծանոթ լինել: Մինչդեռ անվան մեջ «Արարատյան» բառը իսկույն հիշեցնում է բիբլիական Արարատ լեռը, Նոյի իջնելը լեռան գագաթ, վերջին հաշվով համարվում է, որ կյանքը վերստին սկիզբ է առել պատմական այս տարածքում, որը, բնականաբար, Մեծ Հայքի տարածքն է: Այդ մասին, անշուշտ, շատերը գիտեն: Ուրեմն, մեր բոլոր գիտական աշխատանքներում, ըստ իս, ճիշտ կլինի օգտագործել Վանի Արարատյան թագավորություն անվանումը և նոր միայն փորձել Ուրարտուն նույնականացնել նրա հետ: Ինչևէ:

Պատմության նոր դասագրքից իմացա, որ Պունիկյան 1-ին և 3-րդ պատերազմների մասին այլևս խոսք չկա: Ստացվում է, որ այդ երկու պատերազմներն էական դեր չեն ունեցել, առավել հայտնի է եղել Պունիկյան երկրորդ պատերազմը Ք.ա. 218-208թթ.:

Համաշխարհային պատմությունը լի է տարաբնույթ պատերազմներով: Ուստի փորձեմ մի օրինակ էլ բերել: Միջին դարերում, կոնկրետ 1337թ. սկսվեց պատերազմ Ֆրանսիայի և Անգլիայի միջև և ավարտվեց 1453թ.: Այն, որ տևեց 116 տարի, պատմությանը հայտնի է Հարյուրամյա պատերազմ անունով: Այն տարածքային վեճերի պատճառով սկսված պատերազմ էր: Միանգամայն պարզ է, որ այդ հարյուր տարիներին ամեն օր պատերազմներ չեն եղել, դեռ ավելին, հայտնի են որոշ ճակատամարտերի և՛ վայրերը, և՛ տարեթվերը: Սակայն Հարյուրամյա անվանումն ինքնին հուշում է պատերազմի նպատակների, ելքի կարևորությունը տվյալ դեպքում ֆրանսիացիների համար, ցույց է տալիս ռազմավարության սաստիկությունը, ունի միանգամայն այլ հնչեղություն, հետաքրքրությունների շրջանակ, հայրենասիրության շատ ավելի վառ դրսևորումներով է հագեցված: Համոզված եմ, եթե այն նկարագրվեր պատմության մեջ ըստ հայտնի ճակատամարտերի անուններով, այն նույն հնչեղությունը, հետաքրքրությունը, նաև՝ որպես ուսումնասիրման օբյեկտ չէր ունենա, որովհետև պատմությունը նման դրվագներով շատ ավելի հագեցած է: Դա իր տեղողությամբ եզակի դեպք էր համաշխարհային պատմության մեջ: Հիմա փորձենք զուգահեռներ անցկացնել Պունիկյան պատերազմների, Հարյուրամյա պատերազմի և Արցախյան պատերազմի միջև, Արցախյան պատերազմը նախ ներկայացնելով մասնատված, հատվածների վերը նշած անուններով և միանգամայն 30-ամյա տարբերակով: Ես համոզված եմ, որ մասնատված հատվածները պատմության նաև ժամանակի հարվածներին չեն դիմանա, մինչդեռ ամբողջական տեսքով ներկայացնելը միանգամայն այլ կերպարանք կստանա: Այն ցույց կտա մեր մի բուռ ժողովրդի անկոտրում կամքը, ազատ և անկախ ապրելու մեր անխորտակելի ձգտումները, մայր հայրենիքին նվիրված լինելը և այդ հայրենիքի համար նահատակվելու պատրաստ լինելը:

Հարցին մոտենանք նաև մեր ավելի քան 30-ամյա պատմության որոշակի վերլուծության դիրքերից: 90-ականների սկզբից մեր երկրամասը ներքաշվեց երկարատև և անհավասար պատերազմների մեջ: Սա մենք պետք է բնորոշենք որպես Արցախյան պատերազմի առավել ակտիվ շրջան, որը տևեց մինչև 1994թ. մայիսի 12-ի զինադադարը: Զինադադարն անժամկետ էր: Մեր երկրամասը թևակոխեց, այսպես կոչված, խաղաղ զարգացման շրջան: Քննարկենք հենց այս խաղաղ զարգացման շրջանը: Իրոք, դա այդպիսին էր: Եթե փորձենք ընդունել, որ այն, իրոք, խաղաղ շրջան էր, ապա դա շատ թե քիչ կվերաբերի թիկունքիկ՝ բնակչությանը: Կասկած չկա, որ առաջնագիծը միշտ էլ եղել է լարված. դիվերսիոն ներթափանցման փորձերը հաջորդում էին մեկը մյուսին, դիպուկահարների կրակոցներից զոհվում էին մեր զինծառայողները՝ միջին հաշվով շաբաթը մեկ կամ երկու զինվոր: Արցախյան պատերազմում և մայիսյան զինադադարից ի վեր Արցախը տվել է 4800 զոհ, որից 2700-ը՝ պատերազմի տարիներին, 600-ը՝ հրադադարից հետո, 1500 քաղաքացիական բնակչություն: Հայաստանից Արցախյան պատերազմում (ներառյալ հայ-ադրբեջանական սահմանը և 2016թ. ապրիլյան դեպքերը) զոհերի թիվը շուրջ 6500 է: Սփյուռքից նույն այդ ժամանակահատվածում զոհվել է 20 հոգի: Մայիսյան հրադադարից մինչև 2016 թիվը զոհերի թիվն անցնում է 2000-ից: (Թվային տվյալները գրի եմ առել Մաղլեն Շահնազարյանի «Ոչ՝ պատերազմին» հոդվածից, «Արցախի կոմունիստ», թիվ 7-8, հուլիս-օգոստոս, 2016թ.): Ստացվում է, որ ժամանակաշրջանն այնքան էլ խաղաղ չի եղել, ինչպես մենք շատ անգամ փաստում ենք՝ կցելով «Մենք ապրում ենք ոչ պատերազմ-ոչ խաղաղություն կարգավիճակով»:

Քիչ բարձրաձայնված մի հարց ևս շահարկվում էր մեր հասարակության մեջ, որն ի վերջո ճիշտ հանգուցալուծվեց: Դա մեր պետության անվան հետ էր կապված: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. այսպես էր կոչվում՝ սկսած 1991թ. սեպտեմբերի 2-ից՝ Հանրապետության հռչակման օրվանից: Հետագայում, երբ ընդունվեց մայր օրենքը՝ Սահմանադրությունը, շրջանառության մեջ դրվեցին ԼՂ Հանրապետություն և նրա հետ նույնականացված Արցախի Հանրապետություն անվանումները: Հետագայում, երբ փոփոխություններ կատարվեցին Սահմանադրության մեջ (հանրաքվեի միջոցով), պետության անվանումը՝ Արցախի Հանրապետություն, միանգամայն ճիշտ և անփոխարինելի տարբերակն էր: Ասել է թե՝ մեր պետության անվանումը զարգացավ էվոլյուցիոն ճանապարհով (շուրջ 25 տարի) և ճիշտ հանգուցալուծվեց: Սա էլ ինչ-որ չափով (եթե ոչ ուղիղ) կապված է արծարծվող հարցի հետ:

Չգիտեմ՝ ինձ հաջողվե՞ց բերածս փաստերով զուգահեռներ անցկացնելով, համեմատելով պատմական իրողությունները՝ հիմնավորել, որ Արցախյան ազատագրական պայքարը, իր թեժ կետերով հանդերձ, մեկ ամբողջականություն ներկայացնելն ավելի ճիշտ է Արցախյան 30-ամյա պատերազմ անվանումով, անհրաժեշտության դեպքում շեշտադրել առավել ակտիվ շրջանները: Իսկ եթե այն դառնա քննարկման առարկա, մասնավորապես՝ պատմության ուսուցիչների, պատմաբանների և այլոց կողմից, հարցին կտրվի առավել կոնկրետ պատասխան:

Էությանս հավատարիմ՝ ուզում եմ իմ կարծիքը հայտնել նաև վերջերս Արցախյան հեռուստատեսությամբ ներկայացված՝ Արցախի Ազգային ժողովի նախագահ Ա. Թովմասյանի առաջարկի մասին. «Ի՞նչ կլինի, որ մենք նամակ գրենք Մինսկի խմբի համանախագահներին և հրավիրենք Արցախ»: Մոտեցումը շատ ճիշտ է, հապաղելու ժամանակ չկա: Անհրաժեշտ է օգտագործել բոլոր հնարավոր լծակները, ներդնել բոլոր ներուժը՝ հանրությանը (միջազգային) իրազեկելու մեր հանրապետության առկա բոլոր հիմնահարցերի մասին, անհրաժեշտության դեպքում օգտագործել ողջ բնակչությանը թեկուզ ստորագրահավաքների տեսքով, դեռ ավելին, նամակներ հղել (նաև բնակչության անունից) Մինսկի խմբի համանախագահներին ներկայացնող պետությունների ղեկավարներին. չէ՞ որ նրանք ստանձնել են Արցախի հարցի կարգավորման դերակատարությունը, բայց էական ակտիվություն չեն ցուցաբերում գործով:

Խոսքով հարցեր լուծելու ժամանակներն սպառված են, ժամանակն է համազգային պայքարի դրոշակը շատ ավելի բարձր ծածանել:

Լեւոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
գ. Եմիշման

«ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՎԵՊԻ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՆՔԸ. ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ

1 ☞ Հենց այս պատմական ժամանակաշրջանն է ներկայացրել Չարենցն իր վեպում:

Ռուսական զորքերը հեռացել են, Թուրքիան թուրքավարի «կարգ է հաստատում» իրեն վերապահված տարածքներում: Ո՞ւմ ապավինել, եթե ոչ սեփական ուժին: Այդ ուժը ՀՅԴ-ն էր իր նշանավոր դիմումով՝ ուղղված՝ նահիրցիներին: Դիմումում կոչ էր արվում զենք վերցնել և կռվել հայերի հողի ազատագրության համար: Դա պարզապես բոլշևիկների ինքնանպատակ մարտավարության շարունակությունն էր, համաձայն որի՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Կարս-Արդահան-Բաթում տարածքը չէր վերցվում Ռուսաստանից, պարզապես հնարավորություն էր տրվում տեղի բնակչությանը Թուրքիայի, իբրև տարածաշրջանի համար ազդեցիկ երկրի, օգնությամբ ինքնորոշվելու:

Եվ որպեսզի ռուսները ֆիզիկապես չմիջամտեն ռազմական գործողություններին, քաջալերվում էր տեղի հայերին մարտնչել Թուրքիայի ձեռնարկած բռնությունների դեմ: Քանի որ Կարսում ինքնապաշտպանական ուժերը ղեկավարում էին դաշնակցականները, ուստի բոլշևիկյան գաղափարներով տոգորված երիտասարդ Չարենցը քաղաքական սարկազմի թիրախ էր դարձրել դաշնակցականների անհաջող պաշտպանությունը: Ռուսական զորքերը մեծաքանակ զենք ու զինամթերք էին թողել իրենցից հետո, որը աշխարհազորի կողմից, մեղմ ասած, չօգտագործվեց ի պաշտպանություն հայրենի երկրի: Ժողովուրդը պատրաստ չէր ինքնապաշտպանության: Դրա պատճառն ամենից առաջ քաղաքական անմիաբանությունն էր: Վեպում հրաշալի է ներկայացվում այս փաստը: Հիշենք զինվորական բանտից գրված «միֆական նամակը», որը ժամանակի գաղափարական հեղհեղումները մերկացնող կարևոր փաստաթուղթ է: Ըստ Մազութի Համոյի՝ ստեղծված իրավիճակում «նահրցի մի ռազմիկի քացին անգամ բավական էր, որպեսզի նա (ոսոխը) հավիտենապես փչեր իր շունչը, և նա, իհարկե, կփչեր իր շունչը, եթե չլինեին այդ նահրուրաց, ստոր նահրադավ մարդիկ…»: Դրանցից էին Կարո Դարայանը, պարոն Մարուքեն, չակերտավոր օրիորդ Սաթոն, որոնք «վակզալի մոտերքը» ռազմաճակատից փախած դասալիքներին «գլխահան էին անում»:

Ե՛վ հարակից բնակավայրերից ժողովրդի խուճապահար փախուստը, և՛ երկաթուղային կայարանում խռնված տարերային ամբոխի անկառավարելի ափակոծումները, և՛ խեղճացած «նահրցի» ռազմիկների պահվածքը Կարսի բերդում, և՛ հատկապես նահրյան իշխանավորների՝ Համո Համբարձումովիչ Ասատուրովի, ընկեր Վառոդյանի ու բժշկի տխմար անճարակությունը խիստ ռեալիստական են ու տիպական:

Անցյալ դարավերջի ազգային զարթոնքի վկաներս երևի թե այսքան առարկայորեն չընկալեինք կարսյան (նահրյան) ողբերգությունը, ինչքան՝ հիմա: Եվ հարցը միայն մեր օրերում չարենցյան նախատիպերի ստույգ առկայությունը չէ: Թեթևակի հայացք հածելով մեր շուրջը՝ մենք կարող ենք, անշուշտ, մեր շրջապատում վեպի կերպարների նախատիպեր գտնել: Հատկանշական է, որ դեպքերի ճակատագրական նշանակությամբ նույնական իրողություններ կան նաև մեր օրերում: 1990-ականների սկզբին, երբ Արցախում տեղակայված խորհրդային բանակի ստորաբաժանումները լքեցին Արցախը, նրանցից վերցված զենքն օգտագործվեց ի պաշտպանություն հայրենի երկրամասի: Մի բան, որ դրանից շուրջ յոթ տասնամյակ առաջ ժամանակի քաղաքական այրերի մեղքով չարվեց Կարսում: Ավելին, հիմա, երբ մեծ տերությունների համար քաղաքական նժարին կասայան նավթը ժողովրդի ինքնորոշումից ավելի կշռամեծ է, և այդ համապատկերին՝ արցախյան կարգավորման հնարավորությունը նվազագույնի է հասցվել, անհնար է չհիշել չարենցյան «նահիրադավության» մասին: Եթե, Աստված մի արասցե, կարսյան տարբերակը ռեալ իրականություն դառնա, մենք դարձյալ քավության նոխազներ կփնտրենք մեր ներսում՝ նահիրուրացության շեշտումով: Ասել է թե՝ պիտի պատրաստվենք … նո՞ր «Երկիր Նահիրի» կարդալու: Եվ արդյո՞ք մեր մեջ նոր Չարենց կգտնվի…

Անդրադառնալով «Երկիր Նահիրի»-ի պատմաքաղաքական հենքին, դիտարկենք ևս մի կարևոր հանգամանք: Ինչո՞ւ է Չարենցը խուսափել պատմական դեպքերի ու դեմքերի կոնկրետացումից: Միայն գրական հնարանքի անհրաժեշտությամբ պատճառաբանելը, կարծում ենք, թերի կլիներ: Հայաստանի համար այնպիսի բախտորոշ իրադարձությունները, ինչպիսիք են Արևմտյան Հայաստանի կորուստը և երկրի քաղաքական կարգի (իմա՝ սոցիալիզմի) պատմական ընտրությունը, չէր կարող Չարենցի համար հանդիսանալ սոսկ զավեշտալի նկարագրությունների թեմա: Այստեղ ակնհայտորեն առկա է ժամանակի ազդեցությունը, իսկ 1920-ական թվականների սկիզբը ինքնորոնման ժամանակաշրջան էր, կողմնորոշումների փուլ, որն իր ուղղակի ազդեցությունն ունեցավ Չարենցի ստեղծագործական մաքառումների վրա: Վեպի մատուցման ձևերի անսովորությունն արդյունք է հետհոկտեմբերյան գրական որոնումների, որոնք հետագայում հանգեցրին նաև մոլորությունների (հիշենք «Երեք»-ի դեկլարացիան):

Միևնույն ժամանակ, առկա էր նաև գրողի երիտասարդ լինելու պարագան: Բնականաբար, քսանչորսամյա Չարենցը ինչքան էլ տաղանդաշատ, չէր կարող շրջանցել Հայկական հարցի 1920-ականների սկզբին համընդունված հայեցակարգը: Արժեշնչելի է նաև, որ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո բոլշևիկներն ամեն կերպ ջանում էին ազգային-տարածքային հարցում իրենց իսկ թույլ տված վրիպումներն արդարացնել պարտված պատերազմով, որի հիմնական մեղավոր էին համարում ցարական ինքնակալությանը: Իսկ նրանց պնդումները քաղաքական հարթությունում գերակա բնույթ ունեին: 1920թ. դեկտեմբերին, օրինակ, Ստալինը «Պրավդա» թերթում հոդված տպագրեց Կարսը թուրքերին հանձնելու վերաբերյալ, որտեղ գնահատելով հանդերձ Կարսի ռազմավարական նշանակությունը, միաժամանակ, այդ քայլն արդարացնում էր «Արևելքի մահմեդականներին» կոմունիզմի գաղափարներով գայթակղեցնելու նպատակադրությամբ:

… Ասում են՝ պատմությունը կրկնվելու հատկություն ունի: Արդյո՞ք այդպես կլինի նաև հարյուր տարի անց: Չգիտենք: Ուղղակի հիշենք, որ Չարենցը նաև մեզ պատգամել է ամենակարևորը՝ հայ ժողովրդի փրկությունը միասնության մեջ է: Եվ սա լոզունգ չէ, պլակատային խոսք չէ, սա ապագայի անփոփոխ ուղերձն է, որ պարտավոր ենք դարձնել կենսակերպ ու դրոշ:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՊԻՏԻ ԱՊՐԵՆՔ

ԿՅԱՆՔԴ՝ ԿՅԱՆՔԻՍ ՀԱՄԱՐ, ԿՅԱՆՔՍ՝ ԿՅԱՆՔԻԴ ԳՆՈՎ

… Բայց զոհի պես չընկան նրանք,
Ընկան նրանք իբրև մարտիկ,
Ընկան նրանք իբրև մարդիկ,
Որ սովոր են մահը վանել
Իրենց կյանքով՝ հանուն կյանքի…

Այս տողերով է միջոցառումը սկսում Ասկերանի շրջանի ՄՊՍԿ տնօրեն Նարինե Պետրոսյանը՝ հոգում ամբարած կարոտն ու ցավը փոխանցելով ներկաներին: 44-օրյա պատերազմի հետևանքով ինքն էլ է տեղահանվել հարազատ բնօրրանից՝ Ավետարանոցից ու ժամանակավոր հաստատվել Ասկերանում: Նրա հոգու ճիչն ուղղված է անարդար աշխարհին, որի քար անտարբերությամբ մորթվեց մի ողջ սերունդ, որը՝ գիտնական ու զորավար, որը՝ ուսուցիչ ու արվեստի գործիչ, որը՝ բժիշկ ու շինարար, որը՝ հմուտ խոհարար ու արծվաթռիչ օդաչու, որը …

Հուզմունքը կոկորդում խեղդելով՝ տնօրեն Ն.Պետրոսյանն իր բացման խոսքում փորձում է սրբացնել այն բոլոր հայորդիներին, որոնց արյամբ սրբագործվեց մեր մի բուռ հայրենիքի ամեն մի թիզ հողը. «Այսօր մենք կոտրված ենք, ծնկած, բայց ոչ թշնամու, այլ մեր նահատակների շիրիմների ու նրանց ծնողների առջև: Մենք կոտրվելու էլ իրավունք չունենք, պարտավոր ենք դասեր քաղել, քանզի մեր զինվորներից յուրաքանչյուրը հերոսապատում կերտած մի մարտիկ է, հայրենասիրության ու խիզախումի բացառիկ օրինակ: Նրանք շարունակում են մեր կյանքում միշտ ներկա լինել ու երկնքից ճառագող իրենց ժպիտներով կյանք պարգևել մեզ և հսկել մեր անդորրը:

Պատերազմը սովորեցրեց մեզ ավելի շատ սիրել հայրենիքը, քան սեփական կյանքը: Մեկուկես տարվա հիվանդագին կարոտը ոչ մի կերպ մեղմել չի լինում, իսկ անվերջ տանջող «ինչու»-ներն ու «ինչպես»-ները շարունակում են քրքրել առանց այն էլ խեղված մեր հոգիները: Դժվար ու ծանր է գիտակցել, թե քանի՜ չապրած կյանքի գնով ենք արժանացել մեր այսօրվան: Ցավալի է գիտակցել, որ ապրում ես ուրիշների կյանքի գնով, բայց և անսահման պարտավորեցնող է, որ կարողանաս ճիշտ ու այնքան ազնիվ ապրել, որ արժանի լինես ապրելու այն հողի վրա, որը պահպանվել է նրանց արյան գնով: Սիրելի որդեկորույս մայրեր ու ամուսին կորցրած կանայք, սեղմեք ձեր զգացմունքները, սրբեք արցունքները, ուղղեք ձեր մեջքը, քանի որ ձեր սիրելիներն այդպես կցանկանային տեսնել ձեզ՝ միշտ հպարտ ու ժպտադեմ:

Տոկա՛, երկի՛ր իմ սրբազան, շուրջդ հավաքիր աշխարհասփյուռ հայությանը, քանզի վրեժ ունես դեռ լուծելու, արդար դատաստան ունես տեսնելու:

Մենք հավատում ենք, որ հայոց աշխարհում դեռ զրնգալու է հայ շինականի հորովելը, դեռ ողջ աշխարհը լսելու է մեր հաղթանակների ու հաջողությունների մասին»:

Ասկերանի ՄՊՍԿ-ի կամարների ներքո կազմակերպված միջոցառումը, որ կրում էր «Կյանքդ՝ կյանքիս համար, կյանքս՝ կյանքիդ գնով» խորագիրը, յուրօրինակ հարգանքի տուրք էր 44-օրյա պատերազմում զոհված Ասկերանի շրջանի 75 քաջորդիների հիշատակին:

Միջոցառմանը ներկա էին շրջվարչակազմի ղեկավար Հ. Ապրեսյանը, կրթության բաժնի վարիչ Կ. Մայիլյանը, մշակույթի բաժնի վարիչ Ռ. Մկրտչյանը, շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Լ. Ծատրյանը, Ասկերանի միջնակարգ դպրոցի տնօրեն Մ. Ավանեսյանը, արվեստի դպրոցի տնօրեն Ա. Բադալյանը, շրջանի արհեստակցական կազմակերպությունների միության նախագահ Գ. Գաբրիելյանը, զոհվածների մայրեր ու հարազատներ:

Քեզ չեն կարող ծնկի բերել,
Մնայուն ես, իմ Արցախ,
Դու քաջերի բնաշխարհիկ արծվաբույնն ես, հին Արցախ,
Թշնամիներ կգան-կանցնեն, բայց չես ընկնի դու երբեք,
Ինչ էլ լինի, դու հայինն ես, հայագույն ես, իմ Արցախ:

……

- Գարունը եկավ, ամառն էլ կգա…
Ավա՜ղ, տղաներն այն քաջ այլևս չեն գա:

Հաղորդավարներ Ծովինարի ու Վարդիթերի՝ իրար հաջորդող խոսքերի ներքո բեմահարթակ են մտնում զինվորական հագուստ հագած երեխաները՝ զոհված զինծառայողների լուսանկարները ձեռքներին, ու դրանք տեղադրում Կենաց ծառի ճյուղերին:

2020-ի աշունը բոլորը սկսեցին ատել ու այսուհետ միշտ տխրությամբ դիմավորել, քանի որ այդ աշնանը մեր ժողովրդի համար ողբերգական «տերևաթափ» տեղի ունեցավ: Հողն իր գիրկն առավ անկատար երազանքներ հոգում ամբարած բազում լույս տղաների, իսկ որոշ հայորդիների ճակատագրեր էլ մնացին անհայտ…

Դահլիճի առաջին շարքում նստած են որդեկորույս մայրերը, ու նրանց են դիմում միջոցառումը վարողները. «44-օրյա պատերազմում անմահացած հերոսների մայրեր, ձեզ բաժին հասած ցավն ու տառապանքը կեղեքում են նաև մեր հոգիները: Այդ ծով ցավի միջից դուք մեզ ապրելու կոչ եք կարողանում հղել: Ձեր սիրասուն ու փայփայած զավակներին այժմ հարազատ հողն է մայրություն անում, քանզի գիտակցել եք, որ կյանքից թանկ ու կարևոր հայրենիքն է միայն: Խոնարհվում ենք ձեր մեծության առջև՝ մաղթելով միայն ուժ ու կորով, անսահման համբերություն: Ասելիքը մեծ է, բառերը՝ քիչ: Դաժան արհավիրքը մեզնից խլեց ամենալավերին, որոնցով աստվածապարգև հայը պիտի կերտեր իր ազատ ու անկախ երկրի ապագան: Փա՜ռք ձեր որդիներին, փա՜ռք մեր հերոսներին»:

Այո՛, մեր երկրի վերջին անկեղծ ժպիտները 2020 թվականի սեպտեմբերի 26-ին են եղել, հայրենիքի աչքերը վերջին անգամ այդ օրն էին փայլել, այդ օրն է վերջին անգամ ցնծացել մեր երկիրը, և այդ օրն է զինվորի մայրը «բարի գիշեր»-ից հետո հանգիստ քնել: Ի՜նչ իմանար, որ գիշերվան հաջորդող արշալույսը մահն էր գուժելու ազգի նվիրյալ զավակների… Զինվորն այլևս չկարողացավ հաշվել օրացույցի օրերը, թե քանի օրից է տուն վերադառնալու…

Այդ օրն էր, որ հաղորդավար Ծովինարը հայրենի Ավետարանացում տուն ու տանիք ուներ, ու ինքն Ավետարանոցում էր, ու ոչ մեկը բացակա չէր…:

Ու այսօր նա, հայրենի գյուղի կարոտը սրտում, Ասկերանի միջնակարգ դպրոց է հաճախում՝ աչքը հայրենի լեռներին, ականջը՝ հայրենի բնօրրանի ազատման լուրին… Ցավն ու ափսոսանքը իրար միահյուսած՝ դեռատի աղջիկը երազում է կորուսյալ եզերքի ու հարազատների մասին՝ երանի տալով այն ժամանակներին, երբ բոլորով՝ ընկերներով, հարազատներով ու բարեկամներով միասին էին ու երջանիկ:

Շուրջ 30 տարվա դադարից հետո կրկին ցնցում ապրեց Արցախը, սուրբ հողը պատվեց վառոդի հոտով: Պայթեց երկինքը հզոր Արցախի, ու տեղահանվեց մի ողջ ժողովուրդ: Դատարկվեցին գյուղերն ու քաղաքները, ավերակ դարձան մեր շեն բնակավայրերը: Հրոսակները հրո ճարակ դարձրին մեր չքնաղ դաշտերն ու անտառները, վարդ-մանուշակները ներկվեցին ալ կարմիրով: Ամեն, ամեն լավ ու բարին դարձավ հուշ ու հիշողություն:

Եվ Զամիրան կոչ է անում.

Շշուկով խոսեք Արցախ աշխարհում,
Զգույշ քայլեք անհարթ ճամփեքում,
Որ չփշրվեն երազներն հանկարծ,
Զահել սրտերը՝ տղերքի ընկած…
Զգույշ քայլեք Արցախում…

Փոքրիկ Բագրատն էլ հուսադրում է մայրերին.

Հերոսածին մայրեր, շնորհակալ ենք ձեզ,
Տղերքի վրեժը մենք դեռ կառնենք,
Թշնամին ձեր առաջ դեռ ծնկի կգա,
Տղերքի գործը կիսատ չի մնա…
Երդում ենք տալիս հայ զինվորական:

Եվ այսպես բոլոր-բոլոր ելույթները, որ ուղղված էին մայրերին, նրանց սփոփելու, ուժ ու կորով հաղորդելու նպատակ ունեին, որովհետև չի կարող պարտվել այն ազգը, որն այդպիսի հերոսածին ու հերոսակերտ մայրեր ունի: Թող նորատի հարսներն էլ նորանոր Վարդաններ, Մոնթեներ, Վազգեններ, Ռոբերտներ, Ալբերտներ պարգևեն Արցախ աշխարհին, քանզի Արցախը կանգուն է նրանցով:

Հերոսական խրոխտ պարերն ու հայրենասիրական երգերը երեխաները մեծ սիրով ու հաճույքով էին կատարում: Կար ամեն ինչ՝ մարտական ոգի, խրոխտ թռիչք, վերելք ու խոյանք, չկային միայն ցնծուն ծափեր. դրանք տղաները իրենց հետ տարել էին հեռո՜ւ-հեռու…

Պատերազմը մեզ ավելի սերտացրեց իրար. դարձել ենք մի ընտանիք, առանց իրար ճանաչելու՝ ապրեցինք միասին, սիրեցինք իրար, զոհվածի համար լացեցինք, փրկվածի համար ուրախացանք, անհայտ կորածների ու գերիների համար էլ շարունակում ենք աղոթել ու խնդրել, որ բոլորը ողջողջ տուն դառնան:

Միջոցառման մասնակից աղջնակներից մեկը՝ Էլիզաբեթը, փորձում է յուրովի «օգնել» զոհվածներին ու նրանց մայրերին.

Հավերժի գրկում ննջող տղաներ,
Ձեր երազները որտե՞ղ եք թողել,
Իմանամ՝ բերեմ, շոյեմ, սաղմոսեմ,
Մեռոնաջրեմ սուրբ խորաններում:
Ասացեք, տղերք, որտե՞ղ եք պահել
Չգրած-գրած, անծրար մնացած ձեր նամակները,
Իմանամ՝ բերեմ, մեկ-մեկ ծրարեմ,
Աչքը ջուր կտրած մայրերին տանեմ:
Ամեն ծրարի հետ մի ծեղ սփոփանք,
Չասվող երկու խոսք, չամոքվող ցավի սպեղանի դնեմ,
Անբառ խոսքեր խնկարկեմ, օրհնեմ,
Ձեր մայրերին տանեմ ու լուռ խոնարհվեմ:

Բոլոր երեխաների փափագն է, որ ապրեն Արցախում՝ անկախ դաժան ճակատագրից ու անորոշ ապագայից, որովհետև այս սուրբ հողը շաղախված է մեր տղաների արյամբ: Հանուն այդ տղաների ու սերունդների ապագայի՝ նրանք փորձում են վերածնվել ու ապացուցել, որ հայն արժանապատիվ ազգ է, քանի որ՝

Այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամեն մի հնար…

Ամեն չարիք իր վախճանն ունի, հայը դա բոլորից լավ է սերտել, որ դարավոր մաքառումների ընթացքում միշտ փյունիկի պես կարողացել է անգամ մոխիրներից հառնել: Հաստատ գալու են այն երանելի օրերն ու ժամանակները, երբ պոետները հերոսապատումներ են թղթին հանձնելու մեր հաղթական երթերի ու հաղթանակների մասին: Քաջ տղերքը մեր դեռ կելնեն Բարձունքն ի վեր…

Ու կրկին հնչում է Արցախն ապրեցնող մանուկների հոգեցունց խոսքը՝ Վարդուշի ու Ծովինարի շուրթերով.

Ես ո՞ւր գնամ Ղարաբաղից,
Ես ո՞ւր գնամ իմ շեն տնից,
Իմ սուրբ օջախից հարազատ,
Ես ո՞ւր գնամ Ղարաբաղից:
Ո՞ւր են քշում մեզ Արցախից,
Իմ աննման հայրենիքից,
Արմատներս հողում խրված,
Ոսկոր, արյուն հողին խառնած,
Մի մասունք հող կրծքիս սեղմած,
Ո՞ւր գնամ ես պանդուխտ դարձած,
Ես՝ ծնունդով Չանաղչիից,
Ես ուր գնամ Ղարաբաղից:

Անշուշտ, նրանք Արցախն են, նրա անցյալը, ներկան ու ապագան, և նրանց կոտրելն անհնար է:

Ու դահլիճում թնդում է «Պիտի ապրենք» հրաշալի երգը բոլոր մասնակիցների համար:

Չնայած եղանակային վատ պայմաններին, գազի ու հոսանքի հետ կապված խնդիրներին՝ Ասկերանի ՄՊՍԿ տնօրեն Ն.Պետրոսյանի ջանքերով կայացավ ևս մի մեծարման միջոցառում, որի նպատակն էր փոքրինչ մեղմել պատերազմում կորուստներ ունեցող հարազատների հոգու ցավը:

Վերջում երեխաները մի-մի ծաղկեփունջ նվիրեցին որդեկորույս մայրերին:

Ն.Պետրոսյանը եզրափակիչ խոսքում իր երախտագիտությունը հայտնեց Ասկերանի շրջանի արհեստակցական կազմակերպությունների միության նախագահ Գայանե Գաբրիելյանին՝ ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

Հավատում եմ՝ դեռ կգան ցնծության պահեր, կգա խինդ ու բերկրանք, ու ծափերն այն՝ երկիր թնդացնող, կլսվեն նորից:

Միջոցառման ավարտից հետո կրթության բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանն ընդգծեց, որ այդ երեխաներին խաղաղ երկնքի տակ մեծացնելու համար պետք է բռունցքվել ու հզորանալ, ու խոսքն ավարտեց այսպես.

- Յուրաքանչյուրն իր մեջ պետք է փնտրի մեր պարտության պատճառը, և մենք կունենանք մեր երազանքների Արցախը: Մեր երեխաներն այս միջոցառմամբ բոլորիս լավ խորհելու տեղիք տվեցին:

Փառք ու պատիվ մեր հերոսներին:

Սուրայա ՂԱՋԱՐՅԱՆ

ԲՈՒՀԱԿԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻՆ

Մարտի 21-ին Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում (ԳՆՀ) տեղի ունեցավ գիտաժողով՝ «Ժամանակը և ազգային ոգին Չարենցի ստեղծագործություններում» թեմայով:

Գիտաժողովը բացեց ԳՆՀ ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը:

«Չարենցն այն հզոր դեմքն է, որով մենք կարող ենք ներկայանալ աշխարհին: Նա համաշխարհային երևույթ է, բացառիկ հանճար: Չարենցի ցանկացած տողի ու պատկերի մեջ հայոց ազգային ոգին է՝ գեղարվեստական ու գաղափարական ինքնատիպ մարմնավորման մեջ: Չարենցը մեծ նորարար է»:

Բուհի որակի ապահովման կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ամալյա Գրիգորյանն ընդգծեց, որ գիտաժողովը նպատակ ունի մեկ անգամ ևս վերարժևորելու Չարենցի անցած ճանապարհն ու ստեղծագործությունը. «Այսօր մենք ապրում ենք բարդ ու դժվարին ժամանակներում և ունենք ազգային ոգու պահպանման, ինքնության կորսման խնդիր: Եվ բոլորս, առաջնորդվելով չարենցյան գաղափարներով, պատգամներով, որոնք այսօր էլ արդիական են, պետք է կարողանանք ճիշտ կողմնորոշվել այս բարդ իրավիճակներում»:

Գիտաժողովում զեկուցումներով հանդես եկան ԳՆՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Անի Շիրինյանը («Չարենցի սուրբգրային երկերը»), իրավագիտության ամբիոնի վարիչ, ԱՀ վաստակավոր իրավաբան Վոլոդյա Հովսեփյանը («Չարենցի երկու բանտարկությունը»), հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռենա Մովսեսյանը («Չարենցյան լեզվական մշակույթ»), ԱրՊՀ հայոց լեզվի և գրականության դասախոս, բ.գ.թ., դոցենտ Ջինաիդա Բալայանը («Գրողի նորարարությունը «Գիրք ճանապարհին» գրքում. փիլիսոփայություն և գեղագիտություն»), Շուշիի տեխնոլոգիական համալսարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Միեր Հարությունյանը («Ե.Չարենցի «Պատմության քառուղիներով» պոեմի լեյտմոտիվը և անցյալի վերաիմաստավորման պատմականության սկզբունքը»), ԳՆՀ պատմության ամբիոնի դասախոս Ալիկ Սարգսյանը («Երգի հեղափոխականը»), ԳՆՀ մագիստրատուրայի հայոց լեզվի պատմության և գրաքննադատության բաժնի ուսանողուհի Նատալի Օհանյանը («Երեք երգ՝ տխրադալուկ աղջկան գրքի գեղարվեստական խորհուրդը») և ուրիշներ:

Զեկուցումների շուրջ ծավալվեցին քննարկումներ:

Ապա կայացավ ԳՆՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Անի Շիրինյանի «Դիցաբանական և աստվածաշնչյան մոտիվները Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ» գրքի շնորհանդեսը:

Ելույթ ունեցողները քննարկեցին և իրենց կարծիքներն արտահայտեցին գրքի վերաբերյալ:

ԱրՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, բանաստեղծուհի Տաթև Սողոմոնյանը, ԳՆՀ իրավագիտության ամբիոնի դասախոս, բանաստեղծուհի Սոնա Համբարձումյանը, Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի պրոռեկտոր, բանաստեղծուհի Ալիսա Բաղդասարյանը, ԳՆՀ մանկավարժության ամբիոնի վարիչ Օքսանա Գասպարյանը նշեցին, որ Անի Շիրինյանի գիրքը հնարավորություն է տալիս ընթերցողին նորովի բացահայտել ու սիրել Չարենցին:

Գրքի հեղինակ Անի Շիրինյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին՝ ջերմ խոսքերի համար. «Ես,- ասաց նա,- Չարենցով եմ ճանաչել և սիրել հայ գրականությունը: Ուսումնասիրությունը համեստ փորձ է բացահայտելու Չարենց մարդուն, բանաստեղծին և փիլիսոփային»:

Վերջում բուհի ռեկտոր Վարդան Հակոբյանը «Գրիգոր Նարեկացի» հարթաքանդակ և գրքեր նվիրեց Անի Շիրինյանին և պատմաբան Միեր Հարությունյանին՝ գիտաժողովին ակտիվ մասնակցություն ունենալու համար:

ԳՆՀ լրատվություն

«ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

Մարտի 23-ին Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի Կովկասագիտության կենտրոնի նախաձեռնությամբ բուհում տեղի ունեցավ «Ադրբեջանի պետական ահաբեկչական և էթնիկական զտումների քաղաքականություն» խորագրով մամուլի ասուլիս:

Ասուլիսին զեկուցումներով հանդես եկան ՄՄՀ Կովկասագիտության կենտրոնի ղեկավար Հովիկ Ավանեսովը և «Կաճառ» գիտական կենտրոնի ղեկավար Միեր Հարությունյանը:

Հովիկ Ավանեսովի խոսքով՝ այն, ինչ տեղի ունեցավ 1920 թվականին, ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանության շարունակությունն էր: Մտածել, որ Ադրբեջանը փոխելու է իր ցեղասպան ձեռագիրը, բնականաբար, միամտություն կլինի: Այս ամենի մասին իրազեկված լինելով՝ խոսել խաղաղության մասին՝ ևս միամտություն է, որովհետև «Ադրբեջան», «Թուրքիա» և «խաղաղություն» եզրույթներն իրար հետ անհամատեղելի են:

Ըստ Հ. Ավանեսովի՝ հայ ժողովրդի գլխավոր նպատակն է ևս մեկ անգամ արձանագրել, որ չնայած Շուշին այժմ օկուպացված է, բայց այն եղել,

կա և լինելու է հայկական:

«Կաճառ» գիտական կենտրոնի ղեկավար Միեր Հարությունյանն իր ելույթում նշեց, որ այս ժամանակաշրջանը հայոց պատմության տխրագույն էջերից մեկն է: Ընդգծեց, որ 1920 թվականի այս օրը Շուշիում ադրբեջանցի և թուրք զինվորականների մասնակցությամբ նախօրոք ծրագրված գործողություններ են իրականացվել և հրի մատնել քաղաքը, կոտորել անզեն բնակիչներին: Բնակիչների մի մասը մառախուղի շնորհիվ կարողացել է փախչել ու ապաստան գտնել Քարին տակ և Վարանդայի մյուս գյուղերում:

«Շուշիի կորուստը մեզ համար ունեցել է ծանր հետևանքներ բոլոր առումներով, և այս ողբերգությունը պետք է դառնա պատմությունից դասեր քաղելու մի միջոց»,- ավելացրեց Մ. Հարությունյանը:

Ասուլիսի վերջում բանախոսները պատասխանեցին լրագրողների հարցերին:

ՄՄՀ լրատվություն

Դիմանկարի փորձ

ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԻ ՎՐԱ ԱՊՐԵԼՈՎ, ՍՈՎՈՐԵԼՈՎ ՈՒ ԱՐԱՐԵԼՈՎ ԵՆ ՊԱՀՈՒՄ ԵՐԿԻՐԸ

- Հայրենիքը սիրում են այնտեղ ապրելով, տուն կառուցելով, ինչպես ասում են՝ մահվան դեմ օրորոց դնելով:

Այսպես է մեզ հետ զրույցը սկսում Մարտակերտի շրջանի Չափարի միջնակարգ դպրոցի տնօրեն Իրինա Սևումյանը, որը մեծացել է մանկավարժի ընտանիքում, մանկուց տեսել ու զգացել է այդ պատասխանատու գործի դժվարությունները: Երեխաների հետ աշխատելը նրան հոգեկան անդորր է պարգևում: Ասում է, որ իր աշակերտների մեջ երբեք որևէ ազգի հանդեպ թշնամանք չի սերմանել, սովորեցրել է պաշտպանվել այն ստոր ու անմարդկային տեսակներից, որոնք ապօրինաբար փորձում են տիրանալ մայր հողին:

Ավարտել է ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժինը: Ավելի քան 30 տարվա մանկավարժական փորձ ունեցող ուսուցչուհու ամենամեծ ու կարևոր առաքելությունը աշակերտին մտածել սովորեցնելն է և նրան հասարակության մեջ իր դերն ունենալու գիտակցությանը հասցնելը: Նաև սովորեցնելը, որ միայն գիտելիքով ու մարդկային բարձր որակներով կարելի է հայրենիքին ծառայել և օգնել կերտելու ազգի արժանապատիվ ապագան:

- Մենք՝ ուսուցիչներս, նախնիներից ստացած հարուստ մշակույթը, մարդկային արժանիքները, ազգային ինքնագիտակցությունն ու արժանապատվությունը փոխանցում ենք սերունդներին՝ միաժամանակ ստանձնելով հոգևոր կամրջի դեր: Այս դժվարին ժամանակներում պետք է ավելի ամուր պահենք այդ կամուրջը: Այսպիսով ապագա սերունդն իր թիկունքում կզգա այն հենարանը, որ մենք ենք զգում՝ շնորհիվ մեր պապերի արժանապատիվ գործերի,- պատմում է նա:

Զրույցի ընթացքում տիկին Իրինայի հայացքը քիչ հեռու իրար վրա դարսած գրքերից չէր կտրվում: Ասում է՝ իր կյանքն առանց գեղարվեստական գրականության չի պատկերացնում. գիրքն այն հրաշագործ միջոցն է, որն օգնում է ճանաչել ինքդ քեզ, տեսնել ճիշտն ու սխալը, չարն ու բարին, գեղեցիկն ու տգեղը: Մեծ հուսահատություն է ապրում՝ տեսնելով գրականության հանդեպ ժամանակակից սերնդի անտարբերությունը: Ըստ նրա՝ խնդիրը միայն գրականության մասնագետի գործով չի կարող լուծվել, պետք է ընդհանուր մտածողություն ձևավորվի: Վաստակաշատ մանկավարժն իր ուրույն մեթոդն ունի ժամանակակից տեխնոլոգիաների դարում գեղարվեստական գրքի նկատմամբ երեխաների հետաքրքրությունը մեծացնելու. ուսումնական ծրագրով նախատեսվածից դուրս քննարկումներ է կազմակերպում, հանձնարարում է պատմվածքների կամ վիպակների վերլուծություն և այլ միջոցառումներ:

Տնօրեն-աշակերտ-ուսուցիչ հարաբերություններում հաջողության հասնելու նրա բանաձևն է՝ հարգել սովորողի մարդ տեսակը, ընդունակությունները, մտածելակերպը, աշխատանքը, անգամ եթե ուսման մեջ նա շոշափելի արդյունքի չի հասնում: Ասում է՝ երկրին բժիշկներից, ուսուցիչներից ու տնտեսագետներից բացի պետք են նաև արհեստավորներ ու բանվորներ: Իսկ ինքը, հարգելով երեխայի ընդունակությունները, փորձում է ճիշտ ուղղորդել նրան մասնագիտության ընտրության հարցում՝ լինելով նրանց համար և՛ մայր, և՛ ավագ ընկեր:

Պատերազմից հետո հասարակության և մանավանդ երեխաների հոգեկան աշխարհն ու մտածողությունը փոխվել են: Անելանելի թվացող այս վիճակից դուրս գալու համար ուսուցիչներն էլ մեծ դեր ունեն՝ հոգեբանորեն օգնել աշակերտին հաղթահարելու դժվարությունները, նրանց սրտերը լցնել ապագայի հանդեպ հույսով ու հավատով, քանզի հուսահատված մարդը ոչնչի ձգտում չի ունենում:

Այս սկզբունքները որդեգրած մանկավարժ Իրինա Սևումյանը աշակերտներին հազարամյակների պատմությունից օրինակներ է ներկայացնում, պատմում, որ հայ ժողովուրդն ավելի դժվար ժամանակներ է ապրել. եղել են հզոր ազգեր, որոնք ցանկացել են ճնշել հայերին: Հիմա այդ ազգերը չկան, իսկ հայը շարունակում է ապրել ու արարել՝ շնորհիվ հոգեկան մեծ ուժի, կարողությունների ու հավատի:

Չափարը նույնպես սահմանին մոտ գյուղ է: Դպրոցի տնօրենի խոսքով՝ այս փաստն էլ ավելի է պարտավորեցնում ուսուցիչներին՝ աշակերտների գիտակցությանը հասցնելու այն գաղափարը, որ սեփական հողի վրա ապրելով, սովորելով ու արարելով են պահում երկիրը:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿԻՆ ՄԱՐԶԻՉՆԵՐ

ԱՂՋԻԿՆԵՐԸ ԿՈՉՎՈՒՄ ԵՆ ԹՈՒՅԼ ԱՅՆՔԱՆ, ՄԻՆՉԵՎ ՀԱՅՏՆՎՈՒՄ ԵՆ ԾԱՆՐ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կանանց գարնանային տոներն Արցախում առաջվա պես չեն տոնվում, բայց շնորհավորանքները, հաճելի խոսքերն ու նվերներն արդիական են, ինչպես միշտ: Անմասն չմնալով հաճելի հնարավորությունից՝ հյուրընկալեցինք արցախցի աղջկա՝ քնքշության, խոհեմության, ոգու ու ճապոնական մարտարվեստի ուժի ու անհրաժեշտ կոպտության ներդաշնակ մարմնացումը կրող կերպարի՝ կիոկուշին կարատեի մարզիչ Ծովինար ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ:

Ամեն անգամ հետաքրքիր զրույց ունենալով նրա հետ՝ բացահայտվում է, որ «թույլ սեռ» ասվածը թերեւս կարծրատիպի է վերածվում:

Ծովինարը ծնվել է 2003թ. մարտի 24-ին Ստեփանակերտում: Սկսել է կիոկուշին կարատե պարապել 12 տարեկանից: 2015թ. սկսել է պարապմունքները եւ դեռեւս մի քանի ամսվա պարապող՝ հռչակվել ՀՀ չեմպիոն: ԱՀ բազմակի չեմպիոն է: Հայաստանում կազմակերպվող առաջնություններին շարունակաբար մասնակցելով՝ դարձել է ՀՀ բազմակի չեմպիոն: Հաղթանակներին հաջորդել են հայրենիքից դուրս կազմակերպվող մրցաշարերի մասնակցությունն ու կրկնակի հաղթանակները: Վրաստանում կայացած Կովկասի կիոկուշինկայ կարատե դո առաջնության կրկնակի հաղթող է: Ծովինար Ավանեսյանը կիոկուշին կարատե մարզաձեւով պատանիների տարիքային խմբում մասնակցել է Բուլղարիայի Վառնա քաղաքում կայացած աշխարհի առաջնության, աշխարհի գավաթի առաջնության, Գերմանիայում ընթացած՝ Եվրոպայի առաջնության: 2019թ. ՀՀ կիոկուշին կարատե դո առաջին միջազգային առաջնության հաղթող է:

Կիոկուշին կարատեում շուրջ յոթ տարվա փորձ ունեցող մարզիկը արդեն մեկ տարի է՝ զբաղվում է նաեւ մարզչական գործունեությամբ: Մարզիչ Արթուր Առուշանյանի սանը՝ Ծովինարը, իր մարզական փորձն ու հմտությունները փոխանցում է կիոկուշին կարատեի ֆեդերացիայի ներքո գործող՝ իր խմբում կոփվող արցախցի աղջիկներին՝ սկսած չորս տարեկանից:

- Ծովինա՛ր, շուրջ մեկ տարի գործող Ձեր խմբի սաներն ի՞նչ արդյունք ունեն:

- Մայիսին կլրանա ուղիղ մեկ տարին, որ սկսել եմ աշխատել որպես մարզիչ ու աղջիկների խումբ եմ հավաքել: Իմ սաներն արդեն մասնակցել են գոտու որակավորման, որի ժամանակ շատ լավ արդյունք են ցույց տվել:

Պատրաստվում ենք Արցախի, իսկ հետո Հայաստանի առաջնությունների, որոնց կմասնակցեն նաեւ իմ աղջիկները:

- Հետաքրքիր է, կիոկուշին կարատեն Արցախում շա՞տ թվով աղջիկների է գրավում:

- Ներկայում խումբը բաղկացած է 13 հոգուց, բայց սկզբնական շրջանում ավելի շատ էին: Ընթացքում խնդիրներ առաջացան,

օրինակ՝ այնպիսին, ինչպիսին են ծնողների կողմից աղջիկ երեխաներին կիոկուշինով պարապելն արգելելը կամ ուրիշ պատճառներ: Ոչ բոլորն են կարողանում ձգել, հաղթահարել դժվարությունները եւ առաջ գնալ, բայց ունենք մշտապես հաճախող սաներ: Ընդունելությունը կատարում ենք սկսած չորս տարեկանից եւ բարձր տարիքի աղջիկներից, տարիքային սահմանափակում չկա: Խումբը նախատեսված է աղջիկ մարզիկների համար, պարապում ենք տղաներից առանձին, որպեսզի խնդիրներ չլինեն: Կիոկուշին կարատեն սիրելի մարզաձեւ է մեր պարապող արցախցի աղջիկների համար:

- Ի՞նչը մղեց Ձեզ մարզիչ դառնալ:

- Միշտ երազել եմ մարզիչ դառնալու մասին: Մենք պետք է զարգացնենք մեր Արցախը, լինենք կոփված թե՛ հոգեպես, թե՛ ֆիզիկապես: Մարզիչ դառնալուց հետո ամեն ինչ փոխվում է: Փոխվում է մոտեցումը, այլ խնդիրներ են դրվում մեր առջեւ: Ինձ համար մարզիչ լինելը մեծ պատասխանատվություն է իմ ու իմ սաների առջեւ, ես հանձն եմ առել մարտարվեստի միջոցով նպաստել զարգացած մարզիկներ, կոփված, խելացի եւ ուժեղ, էլ ավելի կրթված ու զարգացած սերունդ ունենալուն:

- Ի՞նչ առավելություն ունի Ձեր մարզաձեւը, ինչպե՞ս են մարզիկները ներգրավվում կիոկուշին կարատեի աշխարհ:

- Մեզ մոտ թե՛ մոտեցումը, թե՛ մթնոլորտը դրական են ձեւավորված: Դա է ամենառաջնային սկզբունքը, որն, իհարկե, ձգտում ենք ու կարողանում ենք պահպանել, որ լինի համախմբվածություն ներսում ու հարգենք, սիրենք միմյանց: Այդպիսի մթնոլորտում է միայն հնարավոր առաջընթաց ունենալ զարգացման համար:

- Համաձա՞յն եք այն ձեւակերպմանը, որ աղջիկները կոչվում են «թույլ սեռ»:

- Աղջիկները կոչվում են թույլ այնքան, մինչեւ որ չեն հայտնվում ծանր դրության մեջ, բայց հենց որ գտնում են ելքը ու դուրս գալիս բարդ իրավիճակից, մոռացվում է «թույլ սեռ» ասվածը: Աղջիկները եւս կարողանում են պայքարել, հասնել նպատակների, հաղթել: Ազգային պայքարում բոլորս հավասար ենք, պայքարում ենք ազգովի, կապ չունի՝ կոչվում ենք թո՞ւյլ, թե՞ ուժեղ սեռ:

- Ի՞նչ նպատակներ ունեք, որոնք պատրաստվում եք իրականացնել առաջիկայում:

- Հիմա բոլորիս ամենամեծ նպատակը խաղաղության ձգտումն է, պետք է զարգանանք եւ զարգացնենք մեր երկիրը, լինենք ուժեղ ու միշտ պատրաստ ամեն իրավիճակի:

- Կասե՞ք ներդաշնակ լինելու Ձեր բանաձեւը: Ինչպե՞ս է հաջողվում կոշտ ու կոպիտ մարզաձեւով զբաղվել ու լինել կանացի ու նուրբ:

- Կիոկուշին կարատեն միայն արտաքինից է այդպես երեւում: Երբ ընկղմվում ես կիոկուշինի աշխարհ, հասկանում ես, որ ամեն ինչ ներդաշնակ է, կոպտությունն ու մեղմությունն իրար հետ միաձուլված են: Այդպես սովորում ես օգտագործել նրբությունը սպորտի մեջ, իսկ կոպտությունը՝ նրբության մեջ այնտեղ, որտեղ դա պետք է: Ներդաշնակ լինելու հատուկ բանաձեւ չկա, ես ուղղակի բախտավոր եմ իմ շրջապատի, իմ մարզչի, իմ ընտանիքի եւ իմ կյանքի ընկերոջ հարցում:

- Ձեր մաղթանքը հայ կանանց ու աղջիկներին:

- Մաղթում եմ խաղաղություն ու առողջություն, լինեք միշտ գեղեցիկ, հմայիչ, նպատակասլաց ու երջանիկ, ազատ արտահայտեք ձեր զգացմունքները, միջանձնային հարաբերություններում եղեք միմյանց գնահատող: Ամեն ինչ կախված է մեզանից. ցանկանում եմ հաջողություն կյանքում, գործում, սպորտում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Անվտանգ ընկնելու կանոններ

ԵԹԵ ԸՆԿՆԵԼ, ԱՊԱ՝ ԽՈՒՍԱՓԵԼՈՎ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻՑ

Հանրապետությունում տեղացող աննախադեպ առատ ձյունը խախտում է բնականոն կյանքը: Քաղաքացիներին հորդորվում է զգոն լինել եւ պահպանել իրավիճակին բնորոշ անվտանգության կանոնները: Ցավոք, բնությունը երբեմն դաժան է վարվում մեզ հետ՝ ցույց տալով մեզ մեր անզորությունն իր հանդեպ: Չնայած դրան, կան, այնուամենայնիվ, գործոններ, որոնք ընդունելով եւ կատարելով՝ կարելի է խուսափել զանազան վնասներից:

Այս օրերին լուրջ անհանգստացնող թեմաներից մեկը ձյան եւ մերկասառույցի պատճառով ընկնելն ու վնասվածք ստանալն է: Ոչ բոլորն են իմանում, թե ինչպես պետք է ճիշտ ընկնել: Իհարկե, լավ կլինի, որ ոչ մեկն ընդհանրապես երբեք չընկնի: Բայց ինչպես ցույց է տալիս փորձը, այդ «երբեքը» գոյություն չունի: Բոլորն էլ ընկնում են՝ երեխաները, մայրիկները եւ հայրիկները, մեր հարգարժան եւ սիրելի տատիկներն ու պապիկները: Հանգամանքները տարբեր կարող են լինել: Բայց ամենաշատը մերկասառույցի ժամանակ են հանդիպում ընկնելու դեպքերը:

Մարդիկ կարող են ցավոտ ընկնել մարզական տարբեր շարժվող խաղերի ժամանակ, տուրիստական արշավների ընթացքում, զբոսնելիս, չմշկելիս կամ առհասարակ՝ հարթ տարածքում: Լավ է, եթե վայրէջքը հաջող է, ու պատահարն իրենից հետո թողնում է ընդամենը ժպիտ առաջացնող հիշողություն: Բայց ամեն ինչ կարող է պատահել, իսկ վնասվածքներից ոչ մեկն էլ ապահովագրված չէ: Առողջությունը պետք է պահել, իսկ ճիշտ ընկնելը պետք է յուրաքանչյուրը կարողանա:

Դա սովորելու համար լավագույն տարբերակ է այցելել մարզադահլիճ եւ ցանկացած բանիմաց մարզչի օգնությամբ սովորել ու մարզել ընկնելու տեխնիկաները: Հաշվի առնելով, որ փափուկ մարզագորգերի վրա աշխույժ խաղի տեսքով անցկացվող պարապմունքը ոչ միայն օգտակար, այլ նաեւ հետաքրքիր զբաղմունք է, ուրեմն, կարելի է չսպասել վնասվածքավտանգ շրջանին, այլ պարբերաբար այցելել մարզադահլիճ: Այդ դեպքում մարմինն էլ պատրաստ կլինի, իսկ իրական ընկնելու դեպքում կգործեն ռեֆլեքսները եւ կօգնեն վնասվածք չստանալ: Գիտենք, որ թեորիան չի փոխարինում գործողությանը, բայց համաձայնեք, որ մեզանից քչերն են նման հարցով դիմում մարզադահլիճ: Ավելորդ չենք համարում եւս մեկ անգամ հիշեցնել անվտանգ ընկնելու կանոնները: Ներկայացվող խորհուրդներին հետեւելով՝ հնարավոր կլինի խուսափել վնասվածքներից:

Ընկնելու ժամանակ կատարվող բնորոշ սխալներից առանձնացվում են հետեւյալը.

☞6

ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՑԱԽԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ

Ծանրամարտն Արցախում սիրված մարզաձեւ է: Արցախի ծանրամարտի ասոցիացիայում մարզվում է շուրջ 60 մարզիկ: Սաների ընդունելությունը կատարվում է յոթ տարեկանից: Ասոցիացիայի նախագահ Արթուր Շիրինյանի պարզաբանմամբ՝ բոլոր ցանկացողները, առանց խտրականության, կարող են հաճախել եւ մասնակցել ծանրամարտի պարապմունքներին: Մարզաձեւն ուժային է, պահանջում է մեծ քաշերի հետ աշխատանք: Թվում է, թե ծանրաձողով աշխատելու համար պետք է ունենալ ֆիզիկական հատուկ տվյալներ, մինչդեռ ասոցիացիայի նախագահի մեկնաբանմամբ՝ ծանրամարտի մարզումների հաճախելու համար հատուկ ֆիզիկական պատրաստություն չի պահանջվում: Պարապմունք առ պարապմունք մարզիկի մոտ բարձրանում է ֆիզիկական պատրաստվածությունը, զարգանում է մկանային ճկունությունը: Ծանրամարտի մարզիկները հաճախակի են մասնակցում Արցախի եւ ՀՀ առաջնություններին, դրսեւորում լավ ցուցանիշներ: Մրցաշարերին պատրաստվելու համար միջինում պահանջվում է վեց ամիս: Ծանրամարտով հաճույքով պարապում են ինչպես տղաներ, այնպես էլ՝ աղջիկներ:

Մարտի 15-22-ը Երեւանում ընթացող ծանրամարտի պատանիների եւ աղջիկների ՀՀ առաջնությանն Արցախից մասնակցել է չորս ծանրամարտիկ: Տղաներն այս մրցաշարում մրցանակային տեղ չեն գրավել, բայց աղջիկներին հաջողվել է լավ արդյունք արձանագրել: Մինչեւ 17 տարեկան մարզիկների միջեւ առաջնությունում Էլինա Նազարյանը 76 կգ քաշային կարգում 128 կգ երկամարտի արդյունքում զբաղեցրել է առաջին տեղ: Տասնամյա Յուլյա Շիրինյանը 59 կգ քաշային կարգում 67կգ արդյունքով արժանացել է բրոնզե մեդալի: Մրցանակային տեղեր գրաված ծանրամարտիկները Արթուր Նահապետյանի սաներն են:

Ասոցիացիայի մարզիչ Արթուր Նահապետյանի սաներից ՀՀ հավաքականի անդամներ էլ կան, որոնք մասնակցում են հավաքների եւ հավակնում են առաջիկայում մասնակցել երկրից դուրս կազմակերպվող մրցաշարերի: Էլինա Նազարյանը հենց այդպիսի մարզիկ է: Ծանրամարտում ուշագրավ են աղջիկները եւ նրանց արձանագրած հաջողությունը: Դա վկայում է այն մասին, որ այլեւս չպետք է թերահավատորեն վերաբերվել աղջիկների կամ կանանց՝ լավ ծանրորդ լինելու հանգամանքին: Չէ՞ որ մենք ունենք դրա լավագույն օրինակը՝ ՀՀ սպորտի վարպետ, ծանրամարտի աշխարհի եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն Նազիկ Ավդալյանին:

Ընթերցողներից շատերի մոտ առաջ եկող հարցերից է, թե արդյո՞ք ծանրաձողով պարապելը դրական է ազդում դեռահասների առողջության վրա: Իսկ մարզիչներն ի պատասխան կարեւորում են ծանրամարտի դրական ազդեցությունը մանկապատանեկան հասակի մարզիկների առողջության վրա: Սպորտում առաջնայինը ֆիզիկական վիճակի բարելավումն է, առողջ մարզիկներ դաստիարակելը: Ասոցիացիայի նպատակը ծանրամարտ մարզաձեւի զարգացումն ու մասսայականացումն է Արցախում, մարզիկների մարզական մակարդակի բարձրացումն ու սկսնակ մարզիկների ուղղորդումը դեպի մարզական ռեկորդներ:

Ասոցիացիան ծրագրում է առաջիկայում կազմակերպել Արցախի ծանրամարտի բաց առաջնություն, որին կմասնակցեն նաեւ ծանրամարտիկներ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերից:

Ս. ԱՎԱԳՅԱՆ

ԵԹԵ ԸՆԿՆԵԼ, ԱՊԱ՝ ԽՈՒՍԱՓԵԼՈՎ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻՑ

5☞ 1. Ուղիղ ձեռքի վրա հենվելը: Այդ դեպքում ընկնող մարդը փորձում է կանխել կամ թեթեւացնել մարմնի հարվածը գետնին՝ իր տակ դնելով ուղղած ձեռքը: Այդ ձեւով մարմնի ողջ զանգվածը մեծագույն ճնշում է գործադրում արմունկային հոդի վրա, ինչի արդյունքում այն հաճախ կոտրվում է:

2. **Բազկի վրա հենվելը**: Ինչպես եւ առաջին դեպքում, ընկնող մարդը «թեթեւացնում» է ընկնելը, սակայն հենվում է արմունկի վրա: Այս դեպքում ծանրաբեռնվածությունն ուսոսկրի միջոցով փոխանցվում է ուսային հոդին եւ անրակին: Անրակը մեր մարմնի ամենապինդ ոսկորը չէ, այդ պատճառով էլ այն հաճախ է կոտրվում:

3. **Նստատեղի վրա ընկնելը**: Որոշ դեպքերում ընկնելու այս ձեւն անվտանգ է: Օրինակ, եթե դահուկներով սահելիս ծառ է հանդիպում, այդպես ընկնելով՝ կարելի է կանխել ծառի հետ բախվելը: Բայց եթե սառույցի վրա գնալիս դա կատարվի, ապա ընկնելու դինամիկան ուրիշ կլինի՝ ոտքերը դուրս կպրծնեն առաջ, իսկ մարմինը ազատ անկմամբ վայրէջք կկատարի նստատեղի վրա: Ծանրաբեռնվածության մեծ մասը կընկնի ողնաշարի վրա, կարող են ճնշվել ողները, միջողնային դիսկերը՝ առաջացնելով վնասվածք:

4. **Ծնկի վրա ընկնելը:** Սովորաբար դա կատարվում է այն դեպքում, երբ մարդ սայթաքում եւ սկսում է ընկնել դեպի առաջ կամ կողք, իսկ ձեռքերը զբաղված են լինում իրեր կամ բեռ տանելով: Հավասարակշռությունը կորցնող մարդու իրանը շարունակում է ուղղահայաց մնալ, բայց հավասարակշռությունը կորսվում է ոտքերի շրջանում: Փորձելով պաշտպանել իրերը եւ շորերի մաքրությունը՝ ընկնողը հենվում է ծնկի վրա, որի վրա էլ արդյունքում ծանրանում է մարմնի ողջ զանգվածը: Ծնկոսկրը կարող է չդիմանալ եւ կոտրել:

5. **Ծոծրակով հարվածվելը գետնին դեպի հետ ընկնելու ժամանակ:** Այս տհաճությունը կատարվում է այն ժամանակ, երբ ընկնող մարդը չի հասցնում լարել վզի մկանները, ինչի արդյունքում գլուխը շարունակում է շարժվել դեպի հետ, երբ ուսերն արդեն դադարել են շարժը: Լավագույն դեպքում ելքը կարող է ծոծրակի փափուկ հյուսվածքների սալջարդը լինել, իսկ վատագույն դեպքում՝ գլխուղեղի ցնցումը, գանգի ճեղքվածքը եւ այլն:

Առավել հաճախ մարդիկ ընկնում են հայտնի երեք ձեւերով՝ առաջ, հետ եւ կողքի վրա: Բոլոր դեպքերում էլ առաջինը պետք է ազատել ձեռքերը՝ դեն նետելով այն ամենը, ինչ գտնվում է ձեռքերին:

Ինչպես պետք է ընկնել դեպի առաջ

Եթե սայթաքել եք եւ ընկնում եք դեպի առաջ, ապա ձեր առջեւ դրված խնդիրը ձեզ չկորցնելն է: Ուղղեք ոտքերը եւ երկու ձեռքերը առաջ պարզեք: Ձեռքերը պետք է լինեն արմունկներում թեթեւ ծալված ու քիչ լարված: Ձեռքերի մատները իրարից հեռացրած պահել եւ թեթեւ ծալել այնպես, որ նմանվեն մեծ սարդի: Պետք է ընկնել միաժամանակ երկու ձեռքի վրա, որոնք կծալվեն եւ կմեղմացնեն կամ կկանխեն իրանի եւ գետնի բախման հարվածի ուժգնությունը:

Ինչպես պետք է ընկնել դեպի հետ

Դեպի հետ ընկնելու պահին մի կողմից պետք է պաշտպանել ողնաշարն ու դրա ստորին վերջույթը, իսկ մյուս կողմից՝ ծոծրակը: Դրա համար պետք է գլուխը առավելագույնս խոնարհել առաջ՝ կզակով հենվելով կրծքին: Ատամները պետք է կծել, չփորձել ճչալ կամ խոսել, այլապես լեզուն ուժեղ կծելու վտանգ կա:

- Ոտքերը ծալել ծնկներում՝ ուղիղ անկյամբ եւ հեռացնել իրարից:
- Ձեռքերն ուղղել եւ պահել կողքերին՝ իրանի նկատմամբ 45⁰ անկյան տակ, ձեռքի ափերը ուղիղ պահած մատներով պետք է նայեն ցած:
- Մեջքը ծալել աղեղնաձեւ, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավորություն լինի գոտկատեղից գլորվել ուսերի վրա եւ հակառակը՝ այդպիսով նվազեցնելով իներցիայի ուժը:
- Այս ձեւով ընկնելիս հարվածն առաջինն ընդունում եւ մեղմացնում են ձեռքերը: Հարվածը մարելու նպատակով կարելի է ձեռքերով խփել գետնին, բայց ոչ շատ ուժեղ:

Ինչպես պետք է ընկնել կողքի վրա

Այս դեպքում պետք է կանխել բազկի կամ ուղղաձիգ ձեռքի վրա ընկնելը: Դրա համար ուղղեք ձեռքը եւ պարզեք առաջ՝ ափը ուղղելով դեպի ցած: Ինչպես եւ հետ ընկնելիս, այդպես էլ այս դեպքում ձեռքը պետք է առաջինը կպչի գետնին ողջ երկայնքով, որի արդյունքում հարվածի ուժգնությունը կնվազի: Ոտքը նույնպես պետք է մասնակցի հարվածի մարմանը, դրա համար ծալեք այն ծնկի մասում ու տարեք ընկնելու ուղղությամբ՝ փորձելով գետնին հպվել ոտքի կողային ամբողջ մակերեսով: Հենման մակերեսը այդպես ավելի շատ կլինի, իսկ ընկնելու էներգիան կտարածվի ավելի հավասարաչափ: Գլուխն իջեցնել դեպի կուրծքը եւ պահել ընկնելու հակառակ ուղղությամբ, որի արդյունքում կխուսափեք քունքի կամ ականջի հարվածից:

Հետեւեք խորհուրդներին, խուսափեք վնասվածքներից: Զգոն եղեք:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի «09» փետրվարի 2022թ.
թիվ 41 որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Արցախի ներդրումային հիմնադրամի 2021թ. գործունեության մասին

1. **Հիմնադրամի լրիվ անվանումը՝** Արցախի ներդրումային հիմնադրամ
   - *1.1 Գրանցման համարը* 443.160.11309
   - *1.2 Գրանցման ամսաթիվը* 01.11.2007թ.
   - *1.3 Գտնվելու վայրի հասցեն* ք. Ստեփանակերտ, Տ.Մեծի 37/22
   - *1.4 Հեռախոս* /+37447/ 975511

2. **Հիմնադրի անվանումը՝** ԱՀ կառավարություն

3. **Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝** Էռնեստ Գրիգորյան

4. **Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝**
   Արայիկ Հարությունյան
   Վահրամ Բաղդասարյան
   Արմեն Թովմասյան
   Բենիկ Բախշիյան
   Մանվել Բաբաջանյան

5. **Աշխատակազմը՝**
   Աշխատակազմում ընդգրկված անձանց ընդհանուր քանակը 31.12.2021թ. դրությամբ կազմել է 56 հոգի, իսկ 2021թ. աշխատակազմին հատկացված աշխատավարձի ընդհանուր գումարը՝ 207,326 հազար դրամ (ներառյալ հարկերը և պարտադիր վճարները):

6. **Իրականացված ծրագրերը՝**

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Ծախսված գումարը *(հազ. դրամ)*
1	ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր	183,270
2	ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագիր	700
3	ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի/ մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջմղման աջակցության ծրագիր	921
4	Հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում	674,210
5	Հիփոթեքային փոխառություններ՝ գյուղաբնակ քաղաքացիներին	160,787
6	Իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցում	397,737
7	Համաֆինանսավորմամբ իրականացվող բնակարանաշինարարության ֆինանսավորում	2,160,000
8	Հետագա իրացման նպատակով բնակելի տարածքի ձեռքբերում	2,066,000
9	Առևտրային ընկերություններում բաժնեմասնակցության ձեռքբերում	55,408
10	Նպատակային ծրագրերի իրականացման համար փոխառությունների տրամադրում	2,300,967
	Ընդամենը	**8,000,000**

7. **Ֆինանսավորման աղբյուրները՝**

Հ/Հ	Դրամական մուտքեր	Գումարը *(հազ. դրամ)*
1	Պետական բյուջեից դրամական աջակցություն	8,000,000
2	Տրամադրված փոխառությունների մարում	1,328,713
3	Տրամադրված փոխառությունների տոկոսներ	1,875,595
4	Փոխառությունների ստացում	7,219,300
5	Պարտատոմսերի թողարկում	3,885,920
6	2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կացության մեջ հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարման համար տրամադրված միջոցներ	64,143,316
7	Այլ վաճառքներ/ծառայություններ	314,764
	Ընդամենը	**86,767,608**

8. **Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** *հազ. դրամ* **83,121,109**
   8.1 Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը **83,121,109**

Հիմնադրամի գլխավոր տնօրեն
Էռնեստ Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ-հաշվապահական հաշվառման բաժնի պետ
Գոհար Ղարիբյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հեղափոխական ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
(կուսակցության անվանումը)
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ
(Ժամանակահատվածը՝ 2020 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը)

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎՈՒՄ ՄՈՒՏՔ ԱՐՎԱԾ ԵՎ ԾԱԽՍՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Հատկացման ձևը (կանխիկ/փոխանցում. բանկային հաշիվ/դրամարկղ)	Այլ տվյալներ
1. Նախորդ տարվանից առաջացած մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	—	—	—	—
2. Մուտքի վճարներ	—	—	—	—
3. Անդամակցության վճարներ	—	—	—	—
4. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
5. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
6. Օրենքով նախատեսված կարգով ստացված բյուջետային ֆինանսավորում	—	—	—	—
7. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (նշել գործարքը կամ աղբյուրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
8. Ընդամենը մուտք արված դրամական միջոցներ	—	—	—	—
9. Ֆիզիկականան ձանց տրված վճարներ (աշխատավարձ, ծառայությունների մատուցման վճարներ)	—	—	—	—
10. Սոցիալական վճարներ	—	—	—	—
11. Գույքի վարձակալության վճար (նշել գույքի անվանումը, վարձակալության ժամկետները)՝ 1) 2) 3)	—	—	—	—
12. Կոմունալ վճարումներ (նշել կոմունալ սպասարկման անվանումը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
13. Հարկեր և տուրքեր (նշել հարկատեսակը) 1) 2) 3)	—	—	—	—
14. Գույքի ձեռք բերման համար կատարված ծախսեր (նշել գույքի անվանումը և քանակը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
15. Տրանսպորտային ծախսեր	—	—	—	—
16. Գործուղման ծախսեր	—	—	—	—
17. Այլ ծախսեր	—	—	—	—
18. Ընդամենը ծախսված դրամական միջոցներ	—	—	—	—
19. Մնացորդը տարվա վերջում	—	—	—	—

Կուսակցության ղեկավարի (կուսակցության իրավասու պաշտոնատար անձի) անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Գույքի անվանումը, հասցեն, համառոտ նկարագիրը, չափսերը	Այլ տվյալներ
1. Առկա անշարժ գույքը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ	—	—	—	—
2. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
3. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
4. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (նշել գործարքը կամ աղբյուրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
5. Ընդամենը	—	—	—	—

Կուսակցության ղեկավարի (կուսակցության իրավասու պաշտոնատար անձի) անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Գույքի անվանումը, մակնիշը և սերիան, թողարկման տարեթիվը	Այլ տվյալներ
1. Առկա շարժական գույքը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ	—	—	—	—
2. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
3. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (նշել նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
4. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (նշել գործարքը կամ աղբյուրը)՝ 1) 2) 3)	—	—	—	—
5. Ընդամենը	—	—	—	—

Կուսակցության ղեկավարի (կուսակցության իրավասու պաշտոնատար անձի) անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը

4. ՕՏԱՐՎԱԾ ԿԱՄ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ

	Գույքի անվանումը	Քանակը	Արժեքը	Օտարման ձևը	Այլ տվյալներ
1.	—	—	—	—	—
2.	—	—	—	—	—
3.	—	—	—	—	—

Կուսակցության ղեկավարի (կուսակցության իրավասու պաշտոնատար անձի) անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՇՎԵՑ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՕՐԸ

Մարտի 20-ը աշխարհում նշվում է որպես Ֆրանկոֆոնիայի օր: Այդ առթիվ գեղարվեստական երեկույթ անցկացվեց Ստեփանակերտի «Պոլ էլյուարի տուն-Ֆրանկոֆոնիայի կենտրոն հիմնադրամ»-ում կազմակերպության և այստեղ իր գործունեությունը ծավալող Հադրութի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի կողմից:

«Պոլ էլյուարի տուն-Ֆրանկոֆոնիայի կենտրոն հիմնադրամ»-ի նպատակն է երիտասարդների համար ստեղծել հնարավորություն ինքնակրթվելու, մշակութային գիտելիքները զարգացնելու, գաղափարներ փոխանակելու, ժամանակակից միջավայրում հաճելի ժամանց անցկացնելու, իսկ օրվա միջոցառումն նպատակաուղղված էր արժևորելու Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության դերը, որի կազմում են աշխարհի շուրջ 88 երկիր, և կոչված է խթանելու ինչպես ֆրանսերենը, այնպես էլ մշակութային բազմազանությունը, նպաստելու խաղաղության, ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանությանը, աջակցելու կրթության զարգացմանն ու մասնագետների վերապատրաստմանը:

Միջոցառման մասնակիցները ծանոթացան Հադրութի ՄՊՍԿ սաների ձեռքի և նկարչական աշխատանքներին, այդ թվում՝ ֆրանսիական թեմաներով, ինչպես նաև՝ պարի խմբակների սաների հայկական և ֆրանսիական պարերին, «Պոլ էլյուարի տուն-ֆրանկոֆոնիայի կենտրոն»-ի սաների ելույթներին:

Երեկոն հայկական գուսանական երգերի և ֆրանսիական երաժշտական կատարումներով ավելի գեղեցկացրին Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի սաները:

Հադրութի ՄՊՍԿ-ի մասնակցությունը երեկոյին պայմանավորված է նաև նրա վաղեմի բարեկամությամբ ֆրանսիական կազմակերպությունների հետ: Ինչպես իր ելույթում ասաց ՄՊՍԿ տնօրեն Իրա Թամրազյանը, մինչև պատերազմն էլ Կենտրոնը մասնակցում էր ֆրանկոֆոնիայի օրվան նվիրված միջոցառումներին: Հադրութը նաև քույր քաղաք է Ֆրանսիական Վիեն քաղաքի հետ: Արցախ այցելած ֆրանսիացիները լինում էին նաև Հադրութում և հյուրընկալվում ՄՊՍԿ-ում:

Տեղահանվելուց հետո Երևանում ՄՊՍԿ-ին առաջին օգնության ձեռք մեկնողների թվում էին ֆրանսիական մի շարք կազմակերպություններ: Եվ վերջապես, Ստեփանակերտում այսօր ՄՊՍԿ-ն գործում է «Պոլ էլյուարի տուն-Ֆրանկոֆոնիայի կենտրոն հիմնադրամ»-ի հարկի տակ, ինչի առնչությամբ Ի. Թամրազյանն իր շնորհակալությունը հայտնեց Հիմնադրամի ղեկավար մարմնին, տնօրեն Մարիաննա Աբրահամյանին:

Երեկոյին ՀՕՄ-ի կողմից Հադրութի ՄՊՍԿ-ին հանձնվեց «Թևանիկ» բարեսիրական խմբի նվերը՝ կարի մեքենա, ինչը կխթանի կարի խմբակի գործունեությունը:

Միջոցառմանը մասնակցում էին հադրուցիներ, արվեստասեր հասարակայնության ներկայացուցիչներ:

Սեփ. լրատվություն

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Հիմնադրամի հոգաբարձուների Խորհրդի
«09» մարտի 2022թ. 01 որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Լուսաբերդ»
հիմնադրամի 2021թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Լուսաբերդ» հիմնադրամ
   1.1 Գրանցման համարը 443.160.11642299
   1.2 Գրանցման ամսաթիվը 22.02.2021թ.
   1.3 Գտնվելու վայրի հասցեն ք. Ստեփանակերտ, փ. Աբովյան 2 ., բն 9
   1.4 Հեռախոս Հիմնադրամի */+37497/ 214 142*
   2. *Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը ստացել է աշխատավարձ՝* -375 000 *ՀՀ դրամ*
   3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները Հիմնադրամի միջոցներից չեն օգտվել
2. Իրականացված ծրագրերը՝ *ՀՀ դրամ*

ԱՀ բռնազավթված բնակավայրերի լուսանկարների տպագրում լուսանկարչականց ցուցահանդեսում ցուցադրելու նպատակով	200 000
Զոհված ազատամրտիկի այրու ուսման վարձի վճարում	200 000
Երիտասարդական կենտրոնի հիմնում ԱՀ Մարտունու շրջանի Կոլխոզաշեն համայնքում	500 000
Ադրբեջանական պրոպագանդայի դեմ ուղղված գրքի տպագրություն	945 000
Հադրութի Դիզակ մանկապարտեզին գույքի նվիրատվություն	412 000

3. Ֆինանսական աղբյուրները՝ *ՀՀ դրամ*

Անհատույց դրամական ստացումներ ֆիզիկական անձանցից	4 751 900
Անհատույց դրամական ստացումներ՝ իրավաբանական անձանցից	11 453 610

4. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը *ՀՀ դրամ* 3 497 000
   4.1 Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը 3 497 000
5. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնողը՝ «Աուդիտ Պրո» ՓԲԸ (Լիցենզիա թիվ ԱԾ – 003, տնօրեն՝ Ա. Խաչատրյան, աուդիտոր՝ Հ. Վերդիյան)

Տնօրեն Հարությունի Օսիպյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՊՈԼ ԷԼՅՈՒԱՐԻ ՏՈՒՆ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
2021թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Պոլ էլյուարի Տուն ֆրանկոֆոնիայի կենտրոն» հիմնադրամ
2. Հիմնադրամը գրանցված է ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի կողմից
Գրանցման համար 443.160.12342
Վկայականի համար 02 Ա 003595
Գրանցման տարեթիվ 14. 10. 2015թ.
3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Խ. Աբովյան 50
Հեռ. 047 96 50 96
4. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝ ստացել է աշխատավարձ՝ 0 ՀՀ դր.
5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ հիմնադրամի միջոցներից չեն օգտվել
6. Իրականացված ծրագրերը՝ ֆրանսերեն լեզվի դասընթացներ, բժիշկների վերապատրաստում Ֆրանսիայում, ֆրանկոֆոնիայի տոնին նվիրված և Ֆրանսիայի տարբեր քաղաքներից ժամանած պատվիրակությունների առիթով միջոցառումների կազմակերպում
7. Ֆինանսավորման աղբյուրները՝ ԱՀ պետական բյուջե՝ 5 317 100 ՀՀ դր., ֆրանսիական աղբյուրներ՝ 146 837 089 ՀՀ դր. այլ աղբյուրներ՝ 1 690 434 ՀՀ դր.
8. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 158 251 114 ՀՀ դր.
9. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը - աուդիտ չի իրականացվել

Հիմնադրամի գործադիր տնօրեն՝ Գ. Գերգերյան
Հաշվապահ՝ Ռ. Պողոսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻՆ
(Ժամանակահատվածը՝ 2021 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը)

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎՈՒՄ ՄՈՒՏՔ ԱՐՎԱԾ ԵՎ ԾԱԽՍՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Հատկացման ձևը (կանխիկ/փոխանցում, բանկային հաշիվ/դրամարկղ)	Այլ տվյալներ
1. Նախորդ տարվանից առաջացած մնացորդը հունվարի 1-ի դրությամբ		0		
2. Մուտքի վճարներ				
3. Անդամակցության վճարներ				
4. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ	1	15	կանխիկ	
5. Իրավաբանական անձանց նվիրատվություններ				
6. Օրենքով նախատեսված կարգով ստացված բյուջետային ֆինանսավորում				
7. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից				
8. Ընդամենը մուտք արված դրամական միջոցներ		15		
9. Ֆիզիկականան ձանց տրված վճարներ				
10. Սոցիալական վճարներ				
11.Գույքի վարձակալության վճար				
12. Կոմունալ վճարումներ				
13. Հարկեր և տուրքեր՝				
14. Գույքի ձեռք բերման համար կատարված ծախսեր				
15. Տրանսպորտային ծախսեր				
16. Գործուղման ծախսեր				
17. Այլ ծախսեր		15	կանխիկ	
18. Ընդամենը ծախսված դրամական միջոցներ		15		
19. Մնացորդը տարվա վերջում		-		

Նախագահ՝Գրիգորյան Գ.Շ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Գույքի անվանումը, հասցեն, համառոտ նկարագիր, չափսերը	Այլ տվյալներ
1. Առկա անշարժ գույքը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ		-		
2. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ				
3. Իրավաբանական անձանց նվիրատվություններ				
4. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից				
5. Ընդամենը		-		

Նախագահ՝Գրիգորյան Գ.Շ.

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Գույքի անվանումը, մակնիշը և սերիան, թողարկման տարեթիվը	Այլ տվյալներ
1. Առկա շարժական գույքը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ				
2. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ				
3. Իրավաբանական անձանց նվիրատվություններ				
4. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից				
5. Ընդամենը				

Նախագահ՝Գրիգորյան Գ.Շ.

4. ՕՏԱՐՎԱԾ ԿԱՄ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ

Գույքի անվանումը	Քանակը	Արժեքը	Օտարման ձևը	Այլ տվյալներ
1.				

Նախագահ՝Գրիգորյան Գ.Շ.

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: *www.lusarar.info*

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության՝ 24.03.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: